



ՄԵՅՐ ԸԹՈՌԻ ՎԻՃԱԿԲ ՊԵՐՍԿԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ, ԱՐԵՎԱԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՌՈՒՍԱՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

(1823 թվականի վավերագիր)

Ողորմած Տէ՛ր,

Մի կողմ թողնելով [պարսից խաների կողմից] վանքի միաբանությանը և կաթողիկոսին պատճառած մշտական վիրավորանքներն ու կողուառաները, անհրաժեշտ եմ դունուամ հիշատակել այստեղ միայն մի քանի աչքի բնակնող փաստեր։

1811 թվականին արեգակնակալ թագաժառանգ Արքաս Միրզան... հարգելով կաթողիկոսի խնդիրը, իր բարձր հրամանով, վերադարձրեց էջմիածնի Մայր Աթոռին Աշտարակ գյուղը, որը գրավված է եղել Մուհամեդ խանի հոր՝ Հուսեին Ալի խանի կողմից։ Սակայն Հուսեին Դուկի սարդար խանը գյուղը հանձնելու համար պահանջեց 10.000 ռուբլի, բայց տրովկետև մենք չենք կարողանում վճարել նրան այդ գումարը, ուստի և նա չի հանձնում հնուց մեղ պատկանող գյուղը։ Այժմ, 13 տարի է ինչ էջմիածնի Մայր Աթոռը իր ձեռքում ունի այդ շնորհագիրը, իսկ սարդարն է օգտվում այդ գյուղի եկամուտներից։

Նախապես եղալարդ կոչված գյուղի՝ վեցից չորս և կես մասը պատկանում է վանքին, իսկ մնացածը մասնավոր անձանց, բայց 1812 թվականից սկսած ամբողջապես օգտագործում է ինքը սարդարը, առանց վանքի մասնակցության։ Նույն թվականին խանը,

1. Ներկա վավերագիրը, որ սևագրություն է, շնորհ հեղինակի անումը, բայց բերված փաստերից կարելի է կուսա՞ծել, որ այն գրել է ներսես արքավակուոսու Աշտարակեցին ուսական բարձրաւորաճան մի պաշտոնյալի, հավանական է գեներալ Նորություն։ Վավերագրի տեքստը ուսաերեն է, մենք թարգմանել ենք հայերեն և տալիս ենք կրթատումներով։ — ԽՄԹ.

ինչ որ պատրվակով կանչել տալով իր արքունիքը վանքի միաբաններից տիրացու Ահարոնին, հրամայում է բռնի թիվատել նրան։

1816 թվականին խանը վերացրեց թագաժառանգ Արքաս Միրզայի շնորհած բոլոր արտոնությունները և վանքի գյուղացիների վրա դրեց 4.000 ռուբլու հարկ և 400 ռուբլի՝ տեղափոխության համար։

1817 թվականին երբ նրան բողոք ներկայացվեց վանքապատկան հողերի վրա գյուղվող մուլանցիների հարկը շվճարելու մասին, չբավարարեց մեր արդարացի պահանջը այնքան ժամանակ, մինչև շտացակ մեզանից 5.000 ռուբլի։

Սակայն, ամենից շարաբաստիկը այն է, որ 1819 թվականին վանք ուղարկելով սարդար Մուհամեդ խանին 12 հոգի սարվագներով, հրամայեց վեց անվանի արքեպիսկոպոսների և էջմիածնի ավանի աշքի ընկող բնակիչներից մի քանիսին բանտարկել մի խոցով, քարով շարել դռները և այդպիսի գազանային ձեռվ զրկել նրանց կյանքից այն բանի համար, որ իբր թե նրանք չեն հնազանդվել կաթողիկոսին։ Թեև կաթողիկոսը և նրա հետ ամբողջ հոգեուրականությունը ամեն կերպ հավաստիացնում էին, որ նրանց կողմից այլպիսի մտադրություն անգամ չի եղել, բայց և այնպես հնարավոր շեղավ այդ դժբախտներին այլ կերպ ազատել, բայց միայն 10.000 ռուբլու պարտամուրհակով՝ վճարելու նրան մեղ ամսվա ընթացքում՝ իբրև վարձատրություն իր և իր սարվագների աշխատանքին։

Այսուհետև, նրանք կապկապեցին վանքի աշքի ընկողը մի քանի ծխականների ձեռքերն ու տաքերը այն բանի համար, որ համարձակվել են իրենց արտադրած բամբա-

կեղեն կտորը վաճառելու Մեծելով, նրանցից բռնագանձեցին 2.000 ռուբլի տուպանք, որից հետո միայն հազիվ հազ ազատվեցին տանջանքներից:

Բայց ամենից անտանելին այն է, որ 1821 թվականին, նավրուպի կամ նոր տարվա օրը կաթողիկոսը ներկայացավ սարդարին, բատ պատշաճավորության զարդարված նորին Վեհափառության Ռուսաստանի կայսեր շնորհած շքանշաններով: Այս շքանշանների ստացման մասին սարդարը տեղեկացրել էր պարսից թագաժառանգին և վերջինս շնորհավորագիր էր ուղարկել թագավորի ողորմածության համար, որի մեջ Ռուսաստանի ամենաողղոմած թագավորին անվանում էր հայր և թույլ էր տալիս կաթողիկոսին կրեմու այդ շքանշանները: Բայց սարդարը այդ հրամանից մի քանի տարի անցնելուց հետո սուրբանադակ է ուղարկում, ասելով, որ եթե կաթողիկոսը մյուս անգամ իրեն՝ սարդարին ներկայանա այդ շքանշաններով, ապա կաթողիկոսը այդ շքանշանների ժամանակակից կախաղան կրարձրացվի:

Այդպիսի վերաբերմունքից հետո, կաթողիկոսը հոգեպես խորը վիրավորված՝ կորցնելով իր բոլոր հոգսերը՝ առաջիկայում Մայր Աթոռի և Հոգմորականության բարվոք վիճակի մասին, թեև իր կյանքը կարող էր վտանգի տակ չգտնվել, այնուամենամիշ նորին Վեհափառությունը նպատակահարմար է համարում անմիջապես հեռանալ բռնություններից:

1822 թվականին, երբ արդի կաթողիկոսը գտնվում էր Շուշի բերդում, որ Ղարաբաղումն է, կշմիածնուում վախճանվեցին երկու անվանի եպիսկոպոսներ: Նրանց խուցերի դռները, թաղումից հետո, բայց վաճառում գոյություն ունեցող կարգի, կնքվեցին Մայր Աթոռի կառավարչի կողմից, որպեսզի նշանակված օրը, հավաքերով բոլոր միաբաններին, կազմեն եղած գույքի մանրամասն ցուցակը և այդ ժառանգությունը սիրացնեն վանքի դուռքին:

Սարդարը տեղեկանալով արքեպիսկոպոսների մաշվան և նրանց խցերի դռների կնքման մասին, անմիջապես ուղարկեց Զաֆար խանին՝ իր վայրագությունների սովորական կատարողին, որը կնքելով խցերի դռներն իր կնիքով, առաջարկեց վանքի կառավարչին կամ վճարել 150.000 ռուբլի այդ գույքի դիմաց, և կամ ձեռք չտալ հիշյալ խցերի դռներին: Ապա, մի քանի օրէց հետո, Զաֆար խանը նորից եկավ իր բազմաթիվ ծառաներով և, բաց անելով խցերի երկու դռները, հավաքեց արծաթն ու ուկին երկու փոքրիկ սնուպների մեջ, իսկ թանկարժեք քարերը, ժամանակուցած ժամանակակից մեջ ապագույն իրերը մի ուրիշ սնուպի մեջ, մնա-

ցածից գաղտնի և բացահայտ ընտրելով լավագույնները, հրամայեց անարժեք իրերի համար կազմել պարսկերեն և հայերեն լեզուներով ցուցակ: Այնուհետև բաց թողնելով միարաններին, ինքը նրեք լեզուն սնուպկանը իր քանկության, ընտրել էր: Հետո, գիշերով, կանչեց եպիսկոպոսներին, որ իր թե նրանց ներկայությամբ է այժմ բաց անում սնուպկաները, հարկադրեց նրանց կազմել ցուցակ, որը մե հետպայական օրը հանձնեց կանչելով իր կառավարչին: Այնուհետև կանչելով իր գույցից մեկի մերձավոր վարդապետներից մեկին՝ Ստեփան անունով, անմարդկանական շարչարաններով տանչեց նրան՝ թե ինչու խուցերի մեջ քիչ իրեր են հայտնաբերվել: Նման տանշանքներով Զաֆար խանը ցանկանում էր, որ տանջվածքը ասի, որ իր թե վանքի կառավարիչը իրեն մեծ քանակությամբ իրեր է հանձնել Այնուհետև կարգադրեց շիկացած երկաթով այրել նրա մարմինը և, ստանալով գժրախտից զադունի խոստում՝ վճարելու 1.000 ռուբլի, նոր միայն ազգատեց նրան այդ տանշանքներից:

Այդպիսի անօրինակ բռնությունները, որը վանքի կառուցման օրից ոչ մի ժամանակ չի տեսել Մայր Աթոռը, կատարում են Հուման խան սարդարը և նրան ամեն ինչում չու հանգանդ Զաֆար խանը, իհարկե, ոչ հօգուս Աթոռի, ինչպես իրենք են ցանկանում պատկերացնել, այլ՝ հօգուս իրենց: Եվ այս երկու պատճառով. նախ, որ հանգույցյաններից մեկը հայտնի է եղել իր մեծ հարսությամբ, ինչպես այդ վկայում են հանգույցյալի ձեռքով գրված գրությունները և այլ տեղեկագրերը, որոնք այժմ գտնվում են ինձ մոտ: Այս առթիվ կան և շատ ականատես վկայություններ և ապա, գլխավորը, որ տեղեկանալով եպիսկոպոսների հարսության մասին, կարողանան որոշել իրենց որկամության շափը: Նրանց կեզծ, հնարովի հոգատարությունը վանքի բարօրության մասին, հայտնի է թեկուզ նրանից, որ նշանակակի սկսուանների գույքի հինգերոդ մասն անգամ հասակ վանքի կառավարչությանը, որը վանքի համար մեծ օգնություն էր նրա տնտեսական սույլ պայմաններում:

Անցյալ օգոստոս ամսվա սկզբում Միրզա Զաֆար սարդարի ծառան, որ մի հատիկն է հոգեւորականներին ճնշելու գործում, եկավ էջմիածին՝ գտնելով այստեղ պատշաճ հյուրասիրություն: Բավական կոնծելուց հետո, Միրզա խանը հրամայեց իր մարդկանց մերկացնել զենքերը և ծեծել բոլորին: Ըստ որում, Միրզա Զաֆարի ծառաները վիրավորեցին երկու եպիսկոպոսների, թոփ հարվածով կտրեցին աբեղաներից մեկի վեղարը, զարդեցին մյուսի թեզը, երրորդին սկսեցին

ծեծել՝ հասցնելով կիսամեռ դրության, իսկ երբ ցանկացան նրան մորթիլ, սարդարի ժառանքից մեկը ազատեց նրան: Այնուհետև սպանեցին վանքի դարրասի պահակներից մեկին:

Բոլոր ճնշումներն ու բռնությունները բոլոր
տեսակի միջոցներով լիավատար դարձնելու
համար, Զափար խանը ավելացրեց և այն,
որ էջմիածնի փոքր հյուրատան բակում գրտ-
նըլուղ 13 խանությունները ինքնիշխան կերպով
ընդունեց իր սեփական գերատեսչության ներ-
քո, և իր իշխանության տակ գտնվող գոււ-
ղացիներից հավաքելով չնչին գնով գինի,
սկսեց վաճառել երկպատիկ և եռապատիկ
գնով, որի հետևանքով ժողովրդի և միաբան-
ների վթասը հասնում է մինչև 15.000 ռուբ-
լու:

Նման անգութ և շարագործ կառավարման
հետևանքով, էջմիածնի վանքը վերջին հինգ
տարվա, առանձնապես վերջին երեսու և կես
տարվա ընթացքում, պարտփառ տակ ընկավ
336.845 ռուբլի 90 կոպեկ գումար երևան-
յան արծաթ դրամով։ Այդ ժամկետի ընթաց-
քում վանքի պարտատերերին վճարված գու-
մարը կազմում է 350.363 ռուբլի 25 կոպեկ
և այժմ դեռ մնում է 320.000 ռուբլուց ավել-
ի պարտփառ իսկ սարդարը, պաշտպաններով
պարտատերերին, որոնք ստանում են վաշ-
խառուական և չտեսնված չափի տոկոսներ,
դեռ հանցավոր է համարում միաբաններին։
Բայց պարսից թագաժառանգ՝ նորին Մեծու-
թյուն Արքաս Միրզան, որի բարեհաճու-
թյունն ու ողորմածովյունը ինչպես դեպի
նիրեմ կաթողիկոսը, այնպես և ողջ Հովհա-
ռականությունը գերազանցում է նրա նա-
խորդների ողորմածովյուններից, մինչև օրս
էլ չգիտի վանքի կրած ճնշումների և կաթո-
ղիկոսին ու Հոգևորականությանը պատճառած
անտառների միջամբորանքների մասին։

Բացի այդ, Զաքար անունով մի վարդապետ անցյալ տարի գտնվելով Թեհրանում և արժանանայով նորին Մեծովթան Ֆաթալի

Ծանի տեսակցովթյանը, հայտնել է միայն
վանքի տների մասին, ոչ մի խոսք շասելով
մյուս վիրավորանքների և կողոպառների
մասին։ Այս առթիվ պարսից թագավորը, ի
նշան իր բարեհաճության Արարատյան Աթո-
ռի նկատմամբ, իր որդուն՝ թագաժառանգին
հրովարտակ է ուղարկել և առաջարկել մի-
ջոցներ ձեռք առնել՝ թույլ շտալ վանքը քայ-
քայելու։ Կաթողիկոսը Շուշի գտնվելու հե-
տեւանքով, Ֆաթալի շահը ուղարկել է այդ
գրովթյունը կաթողիկոսին, որին Նորին Վե-
հափառությունը մինչև օրերս չի պատաս-
խանել։

Կաթողիկոսական Աթոռի, իրեն՝ կաթողիկոսի, իմ քաջմաթիվի հոգեւոր միաբանակից եղբայրների և ամբողջ Հայոցից ժողովրդի այդպիսի ծանր զրությունը, ավելացնելով դրան նաև իմ քաջաքացիական պարութք, իմ վրա սուրբ պարտականություն են դրել, դիմել որոշ միջոցների՝ թեթևացնելով Արարատյան Մայր Անոնի վիճակը, Երևանի ներկայեկավարների՝ անսահման բռնությունների, մեծ մասամբ կողոպուտի միջոցով առաջացած պարտքերից, ինչպես և զանազան խարեւության միջոցով կատարվող ապօրինի պարտքերից, որոնք ավելանում են մոլորդակների վերադիր տոկոսների անընդհատ աճով և այն պարտամուրհակներով, որոնք այժմ գտնվում են ինձ մոտ...:

Այս անսպասելի գեղքի կտավակցությամբ,
ևս դիմում եմ երկրացին կիսագնդի քարձոր
և զորեղ պաշտպանի՝ Համայն Ռուսաստանի
հնքնակալի՝ ամենահուսալի և աստվածա-
նման Հոգանավորությանը և Հայտարարում
եմ Ձերդ Գերազանցությանը Կաթողիկոսա-
կան Աթոռի երկարաւուն և ծայրահեղ քայ-
քայման, կաթողիկոսին և Հոգանորականությա-
նը Հասած գրքախտությունների մասին, որը և
մեռաբերում է ամբողջ ժողովունքին...:

ՍԵպտեմբեր, 1823 թ.

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
Արխիվային բաժին, Կարպովիկոսակնն պիւս,
ընթափանակ № 45, վայելեագիր № 223)